Հավելված N1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-25/21»**

«Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար **անվադողերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-25/21» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 22/10/2025թ. ժամը 19:07-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 24/10/2025թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1 - Հարգելի գործընկեր, խնդրում եմ տալ պարզաբանում հետևյալ հարցերի վերաբերյալ.
ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-25/21 ծածկագրով գնանշման հարցման հավելված 6-ի հավելված 1-ում, օգտագործել էք մեջբերում.
Անվադողերը պետք է լինեն «Michelin» կամ համարժեքը հանդիսացող «Bridgestone», «Continental», «Dunlop» կամ «TOYO TIRES» ֆիրմայի. մեջբերման ավարտ. հասկացությունները, ինչը հակասում է ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետը, այն է
5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:
վերեհիշյալ կետի պահանջներով արգելվում է հղում կատարել որևէ ֆիրմայի կամ արտադրողի և որպես բացառություն միայն թույլատրվում է հղում կատարել, երբ անհնար է գնման առարկան բնութագրել առանց դրանց, իսկ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N526-Ն որոշման 22-րդ կետը կոչված է ապահովելու օրենքով սահմանված բացառության առկայության դեպքում միայն:
Սույն մրցույթով պահանջվող գնման առարկան հանդիսանում է անվադողեր, որոնք ունեն նվազագույնը 10 և ավել բնութագրիչներ.
Խնդրում եմ պարզաբանել, անվադողերի որ հատկանիշները հնարվոր չի բնութագրել, որ հրավերում ներառվել են կոնկրետ ֆիրմային անվանումներ, որն էլ իր հերթին սահմանափակում է գնումների մասնակցելու հավասարությունը՝ ՀՀ գնումների մասին օրենք, Հոդված 7, ինչպես նաև խնդրում եմ հայտնել թէ որ օրենքով և ինչ հիմքով նման պահանջներ ներառվել:

Պարզաբանում N 1 - Հարգելի գործընկեր, գնման առարկան բնութագրված է այն կարիքին համարժեք, որի համար կատարվում է գնումը՝ համաձայն կիրառելի օրենսդրության: Առանց ֆիրմային անվանումներ նշելու անհնար է բնութագրել գնման առարկան: Ընդ որում, նշվել է ոչ թե մեկ, այլ մի քանի անվանումներ, որոնց բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ: Որևէ անձի որևէ իրավունք չի սահմանափակվել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-25/21» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Կարինե Սարգսյանին:
Հեռախոս՝ /010/ 510-302

Էլեկտրանային փոստ՝ **karine.sargsyan@1-03yerevan.am**